

Հ Ա Ս Ց Է

Rédaction du Journal arménien


ARCHALOUYCE

(EGYPTE) LE CAIRE

Չի հրատարակուած ձեռագիրները
ես չե՛ն տեսիր :

Բաժանորդագրութիւնը կանխիկ է, իսկ
ծանուցումները կ'ընդունուին մասնա-
ւոր համաձայնութեամբ :

Քարտուղար Խմբագրութեան
ԵՂԻՔԷ ԹՈՐՈՍԵԱՆ



ՊԱՏՄԵՆՔ

ԵՂԻՔԷ

Տարեկան դրոշմը 30

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան փրակը 10

Բաժանորդի 3ԱԵԼՈՒՄ Ենրու փոխադրեց
վճարումը վերջ պիտի ըլլան :

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Շ Ա Ր Ա Ք Ա Ր Ա Ք Ե Ր Ք

Թե՛ ԱՐՇԱՆՈՍՄԻ եւ թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ
վերաբերեալ ներքախն խնդրոց հաւար
պիտի է դիմել ներքախնութեան հասցեով
քերթիս Մասկարարին, որ է՛

ՊԵՏՐՈՐԻ ՓՈՒՄՈՂԱՆ

ԿԵ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրները ուղղակի պատասխանա-
տու են իւրեց զեւծներուն

ZUSE 20 ՓՈՒՄ ՈՂԱ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հ Ա Ց Կ Ա Կ Ա Ն Հ ՈՐ Ի Զ Ո Ն

Վ Տ Ա Ն Գ Ն Ե Ր

Թե՛ ընկերային շրջանակներու
մէջ և թե՛ երբեմն մտաւորական-
ներու հետ տեղի ունեցած խօսակ-
ցութեանց առթիւ՝ պատահութիւն
ներկայացած է ստեղծ յիշատակել
թե՛ զմեզ ճշնոյթ բերտ ձեռքերը երբ
մեզի կործանարար հարուած մը կը
պատրաստուին տալու, նախ անոր
ալիքարարութիւնը կ'ընեն մեզի ա-
նուղակի միջոցներով :

Դատադրութեան պակասէ անդին
ուրիշ զօրաւոր պատճառ մը չենք
կրնար դանել, մեր վրայ տեղացող
այդ հարուածներէն կարելի չափով
զգուշանալու դէմ գործուած ան-
խոհմտութիւնները արգարացնելու
համար :

Ողջամիտներու բերնէն գոչեալ
արտայայտող բառ մը կրնա՞նք ըս-
պասել, երբ մէկ քանիներու ընդու-
նայն փառասիրութիւնները փայ-
փայելու չափ դիւրահաւան կը լի-
նինք, ու յետոյ՝ բարեգործողի համ-
բառ մը չլինելու համար հազարաւոր
գողատանքներու ակնկալութիւնը ու-
նենալու չափ առաջ կը մղենք մեր
մտածումներն : Ճշմարիտ մարդ կոչ-
ուելու իրաւունքէն է որ կը զրկենք
մենք զմեզ՝ մեր այս անտարբեր վար-
ուելակերպով :

Անցեալ դէպքերը թերեւս շուտ
մոռնան կամ մոռնալ ուզին մեզ ա-
ռաջնորդողները... սակայն թարմ օ-
րինակներ կուգան մեր ի վերջ ըսած-
ները հաստատելու անգամ մը ևս,
եթէ մեր մինչև ցարդ տեսածներն
ու ըսածները անբաւական են... :

Կ. Պոլսէն ֆետր. 26 թուա-
կանաւ Ռիւթէրի գործակալութեան
ստացուած հեռագիր մը հետեւեալ
ճանրակչիւ տեղեկութիւնները կը
բերէ մեզի, որ յայտնի համարձակ
նոր մեքենայութիւններու պատրաս-
տութեանը ալիքարարութիւնն է :

Հեռագիրը կ'ըսէ. « Գրեթէ երեք
չաքաթ կայ որ Ձմիւռնիոյ մէջ ութը
թուրքեր ձերբակալուելով Կ. Պոլիս
տարուած են, այն ա՛րքատանու-

թեան ներքե՛ որպէս թե՛ ասոնք
եւրոպայի ժէ՛՛ն թիւրքերու վարիչ-
ներուն հետ թղթակցութիւններ փո-
խանակած են : Այս խնդիրը ու-
սումնասիրելու համար յատուկ մաս-
նախուժ մը կազմուած է, որ երը-
տըղի մէջ կը կատարէ իր նիստերը :

« Հիմա՛յ հետզհետէ կապացուց-
ուի թե՛ կարեւոր վաւերութիւններ
ձեռք բերուած են, որոնց մէջ կայ
նաե Տամատ Մահմուտ բաշայի Եր-
զուն՝ Սապահէտտին Էֆէնտիի՛ մէկ
նամակը, ուրկէ կը հասկցուի թե՛
ժէ՛՛ն թիւրքերու և Հայ յեղափո-
խական կուսակցութեանց մէջ հա-
մաձայնութիւն գոյացած է թուր-
քիոյ ինչպէս գործելու համար : »

« Ասկէ զատ, կ'ըսէ հեռագիրը,
գրաւուած թուղթերէն կը հաստա-
տուի թե՛ Գուրպան Պայրամի առթիւ
ցոյց մը պատրաստուած է, որուն
ինչ ըլլալը տակաւին չ'գիտցուիր : »

« Կարելի է որ Գուրպան Պայ-
րամի աջհամըրի հանդէսները ինչ-
պէս ամեն տարի՝ Տօլմա - պաղէի
պալատին մէջ կատարուելու տեղ
այս տարի Մէրասիմ քէօղը կատար-
ուելու համար տրուած որոշման
պատճառները ասոնք ըլլան : »

« Ձինուորական շրջանակներու
մէջ զոյց կը շրջի թե՛ Երեզայի չո-
րորդ և Դամասկոսի հինգերորդ ղո-
րարանակները հրաման ստացած են
պատահականութեանց առջև պատ-
րաստ բռնելու շէջիւնները : Այս մի-
ջոցները ձեռք կ'առնուին հաւանօ-
րէն փոքր Հայրի արեւելեան նա-
հանգները պաշտպանելու համար,
ուր հայ յեղափոխականներու շար-
ժումներ ծայր կուտան : »

Իրաւ ըլլայ կամ չլինու վերո-
գրեալ հեռագիրն պարունակու-
թիւնը : Երկու պարագային ալ վը-
տանդ մը կայ հայերուն համար :
Մեր հայ յեղափոխական բարեկամ-
ները աւելի շիտակ մտածած պիտի
ըլլան, եթէ լոկ իրենց գոյութիւնը
զգալի ընել տալու համար ծայրա-
հնչ միջոցներու չ'գիմեն : Դաւառ-
ներու մէջ ոչխարներու պէս անձայն
անշուշտ մտրվողներուն քանակը
եթէ բազմաթիւ բարեհաճին իրենց
գործունէութեան որակին հետ, ի-
րենք ալ պիտի ստիպուին խոստո-
վանելու թե՛ միջոցները նպատակը
չեն կրնար արգարացնել... :

ՆԱՍԱԿ ԳԱՅԻՐԷՆ

Հետեւեալ նամակին հրատարակու-
թիւնը կը խնդրուի մեզու, որ ինչ ինչ կե-
սերու մեջ յողուածագրին համակարծիք չի
գրնուելով հակդեմ կը հրատարակեմ յա-
նուն անկողնակախորքեան :

ԿԻՐԱԿԻ ՕՐՈՒՄՆ ՄԻԹԻՆԿԸ

Մարգարուած. Միթինկը անդի ու-
նեցաւ Մարտ 1 ի կիրակի օրը :

Եկեղեցին լեւի լիցուն էր ժողո-
վուրդի հոծ բազմութեամբ մը որ փու-
թացած էր հոն ողբացեալ Արփիար Ար-
փիարեանի կսկիցեցոցի սպաննուածին
դէմ իր անկեղծ զոլուանքը յայտնելու :
Եւ ապագային այդ տեսակ եպիսկոպո-
սիները շատուելու համար Միթինկը կազ-
մակերպող Մասնախումբին կողմէ ձեռք
առնուելիք գործնական եւ ազգեցիկ մի-
ջոցները իր հոգը ձայնովը անգամ մը
եւս հաստատուելու :

Պատարագին աւարտուածն անմի-
ջպէս վերջը. սեղանին վարագործը
կը փակուի եւ նոյն պահուն երիտա-
սարդներ, ծերունիներ, Տիկիներ, Օ-
րիորդներ, մտաւորականներ, գործա-
ւորներ, հարուստներ, վերջապէս ա-
մեն դասակարգէ ազգայիններ կը յա-
ռաջանան դէպ ի դասը, դէպ ի սեղան
ալ ու ձախ, լսելու համար օրուան ա-
տենախօսները :

Չը մոռնանք ըսել թէ Առաջնորդ
հայրը հաճած էր իր նախագահութեամբ
պատուել այդ պատահաւորի Միթինկը որ
մահուան եւ կեանքի էն վիթխարի հար-
ցը պիտի լուծէր :

Աղաւնունի Հայրը մէկ քանի բա-
ւերով Միթինկը բանալ է վերջ՝ խօսք
տուաւ Տօքթ. Տաղաւարեանի :

Պ. բթիչը, իր գրաւոր ստեղծա-
բանութիւնը սկսաւ Արփիար Արփիար-
եանի՝ բաւական մանրամասն կենսագ-
րականովը. ներքողից անոր գրագէտի,
հրատարակողի անվիճելի տաղանդը, եւ
իր հանրային գործիչ՝ ջանողը դարէ
ի վեր, անոր մասուցած ծառայու-
թիւնները, եւ անչափանդիր եւ հը-
պարտ նկարագիրը :

Պ. Ատենախօսը իր վերջարան
արգար զայրոյթով անէճքներ թափեց
եպիսկոպոսի ու եպիսկոպոսի միտն-
գամայն :

Տօքթօրին յաջորդեց Պ. Պէօղիկ-
եան, Գահիրէցոց համար անմասնից դէմ
մը, որուն համար բաւական յաջողակ ա-
տենախօս մըն է կրնանք ըսել :

Պ. Ատենախօսը, Արփիար Արփի-
արեանը ձանջնալու պատիւը չունենալը
յայտնելէ վերջ, անոր տաղանդը ներ-
քողեց : Միացեալ Ընկերութեան մէջ

Արփիարեանի իբր հիմնադիր՝ կատա-
րած մեծ դերը խօսքի նիւթ ընտրելով՝
Հայաստանի մէջ բացուած վարժա-
րաններու եւ մասնաւորապէս Վանի
մէջ հիմնուած Վարժապետանոցին վրայ
ժանրացաւ :

Պ. Պէօղիկեան իր ընտրած նիւ-
թէն չափազանց հրապուրուած կ'երեւար
որովհետեւ չը կարողացաւ մտաբերել,
թէ բոլորովին չեղած էր օրուան նիւ-
թէն եւ պաղ արեւով շարունակեց իր
ատենախօսութիւնը՝ որուն մեծագոյն
մասը. Մկրտիչ Փօրթուքալեանի ուղ-
ղուած ներքողական մըն էր :

« Արմէնիա » ի յարգելի խմբագ-
րին արժանիքը մխտողներէն չենք թէեւ՝
բայց Պ. Ատենախօսը յարմարագոյն օր
մը կրնար ընտրել :

Ներքի է արդեօք յիշեցնել Պ. Պէօ-
ղիկեանի, թէ Միացեալ Ընկերութեան
վրայ խօսած պահուն կրնար նաեւ որոշ
տեղ մը առը Միացեալ Ընկերութեանց
Վարժարաններու նախկին Տնօրէն ող-
բացեալ Մկրտիչ Մարթեանի, որ անը-
կուն եւ ետանդով աշխատեցաւ մինչև
այն օրը ուր Հայաստանէն Արփիկեան
Տրիպոլիս արտորուեցաւ եւ իր արտորա-
վայրէն ազատած՝ ապատանեցաւ Իզ-
միր և հոն էր որ քանի մը տարի ա-
ռաջ մեռաւ աղքատ՝ անչափանա որ-
բուկներ ու լալազին կին մը թողլով
իր կտիւն :

Երրորդ Ատենախօսն էր Տիար Մի-
րան Տամատեան, որուն գրաւոր անա-
չառ բանախօսութիւնը ցնցող տպաւո-
րութիւն մը թողուց ներկայիս որուն
վրայ :

Պ. Տամատեան սովորեալ չեղողով
մը ըսաւ թէ, « Ինչքան եկած չէ երբեք զը-
ուատականը ընելու Արփիարեանի, ո-
րուն շատ մը կէտերու մէջ գողափա-
րակից չէր եւ որ իր միտքին մէջ շա-
ղապատուած գողափարներուն յորդու-
մէն յաճախ հակասութիւններու մէջ
ինկած ու սայթաքումներ ունեցած է,
այլ եկած է անգամ մըն ալ իր գոր-
չանքն ու զոլուանքը յայտնել : անիժա-
պարտ սեւ ձեռքերուն դէմ ոչ Ունեհանը
Սագունին. Եսէնը. Թաշանեհանը եւն,
սպաննելէ վերջ հոս Գահիրէի մէջ ալ
համարձակեցան վատորէն սպաննել Ար-
փիարեանը, որ ինչ որ ալ ըլլայ, իբր
հրատարակողի նշանաւոր տնուն մը
կը թողու : »

« Ճշմարիտ ու Սուրբ Յեղափոխու-
թիւնը - ըսաւ - կ'ընդվզի գրամաշորթ-
ներու խմբակին դէմ, որուն անարգ
գործելակերպին դէմ պէտք է մաքրտին
անկեղծ յեղափոխականները, քանի որ
Յեղափոխութիւնը ծնած է բունակալու-
թիւնը, աւաղակութիւնը տապալելու
եւ յարգել տալու համար խօսքի, մա-
մուլի եւ գողափարի բացարձակ ազա-
տութիւնը : Պ. Տամատեանի բանախօ-

սուբստանցի վերջ Մասնախումբի անդամ Պ. Յ. Յովակիմեանի գեղարվեստական շահագործումը կանխապես պատրաստուած . . .

Այդ բանաձևերէն երեքը գրեթէ առանց առարկութեան ձեւաւորուած ընդունուեցան . . .

Առաջնորդի մը կողմէ այսքան վախկոտութիւն մեծը չենք կրնար ըմբռնել . . .

Գալով այդ բանաձևին՝ պէտք է ըսել թէ անխորհուրդ անարամարանական աւելցումներն մ'ըլլայէ զատ . . .

Անաստիկ Միթիլինի մը որ ձեռք առնուելիք միջոցներուն մէջ յոռութի կը կարծուէր . . .

ՍԻՎԱ

(*) ՄԱՆՈԹ . . . Բանաձևերն պարունակութիւնը հետեւեալներն են . . .

1. - Իր համազգային վիշտը կը յայտնէ անզուգական գրագէտ - հրատարակագիր և գործիչ՝ Արփիար Արփիարեանի եղբորական մասնակցի առթիւ . . .

2. - Իր խորին զայրոյթը և պիտակաբար կը հռչակէ գաղափարի խօսքի և հայրենեաց թշնամի՝ ազգասպան ոճրագործներուն . . .

3. - Կ'որոշէ յուշարձանով մը յաւերժացնել անվեհեր զոհին՝ Արփիար Արփիարեանի յիշատակը . . .

4. - Միանշանու կերպով կը խնդրէ Ազգային իշխանութիւնէն, որպէսզի անդակաւ իշխանութեանց զիմեով ոճրագործներուն և մեղաւորներուն խնայալի պատժուիլը և Հայ գաղթականութեան պաշտպանութիւնը պահանջէ . . .

ՀԱՆՐՈՒԹԵԱՆ

ԴԱՏԱՍԱՆԻՆ

Այլ ընդ այլոյ տարաձայնութիւններու, նենգամիտ, դիտումաւոր և գժուծ զրպարամանքներու և անլուր չարախօսութեանց այլ ևս վերջ մը դնելու համար, այսօրուրէնէ սկսեալ . . .

կին հիմնիկը քանդուելուն ևն . . . Առանց շատ մանրամասնութեանց մէջ մտնելու, որ չարազանց երկար պիտի ըլլայ, պէտք է ըսել թէ՛ Տ. Ն. Թորոսեան անիկից և վայրագ ՈՃՐԱՓՈՐՁԵՐԻ՛՛՛ զոհուած, 1906 Ապրիլ 13 ին կասալարական հիւանդանոցը կը փակուի . . .

Յաւալի է որ՝ օրինաւոր խօսքի և մամուլի ազատութիւնը յարգուած երկրի մը մէջ, ինչպէս է Ս. Պիպոսը, սճրագար զգացումները և վատարայր կեցիքը իրենց մասնաւոր տեղը կ'ունենան և քաջալերութիւն ալ կը գտնեն տակաւին . . .

Ըսողներ ըլլան թերեւ թէ՛ Արշալոյս ազգային իշխանութեան գէմ կ'ելլէ դարձեալ . . . Ըսողներ ըլլան թերեւ թէ՛ զրկանքներու և ոճիւրի առարկան եղիչէն տարբեր անձ մը ըլլար, միթէ թոյլ պիտի տրուէ՞ որ այսչափ անարդարութիւններ սանձարձակ գործուէին . . .

ԽՄԲ .

Թ Ղ Թ Ա Պ Ա Ն Ա Կ

Գահիրէ Ապրիլի 2 Հոկտ. 1906 Կառվարական Հիւանդանոց

Գր. Տ. Մկրտիչ Մ. Վ Ազաւունի Առաջնորդ Հայոց Եղիպտոսի և Նախահայ Պատ. Բաղադական Ժողովոյ Գաւ. Վարչութեան

Սրբազան Հայր Անցեալ Սեպտ. ամսոյ 23 ին չորս ամիսը լրացաւ . . .

«Վիշտ» բառով միայն որակած իս ծանրութիւնն ու պատճառած հաղու մաշը, և այսպիսի մահու չափ ստակա . . .

(*) Որովհետեւ Առաջնորդին և Առաջնորդարանի մէջ եղող շատերուն ու մասնաւոր Բաղադական Ժողովոյ անգամայն խիստ մոտեցնէր բուն խնդիրը իր ներքին կողմերով, Ման. Ն. . .

որի միջոցներով ինձի եղած զրկանքին ու անխորհուրդան անգամութեանը՝ իմ կացութեանս մէջ եղող զրկուած մը միայն կրնայ զգալ . . .

Նիթ ճէրը կամի՛ր - ինչպէս կ'ըսեն - պիտի գայ ժամանակ անշուշտ, յորում կարելի պիտի ըլլայ ստուգել թէ՛ որչափ անխորհուրդն հնարուած ու նորոշին հիւանդանոց քանի՛ քանի՛ մղոններով հեռի անխորհուրդ անանդի զբախտութիւններ հրատարակ զրուած են չարամտորէն, իմ ներկայ անխորհուրդ վիճակս և ակամայ բանաւորութիւնս ձեռք թերուելու համար . . .

Առ այժմ իմ միթիթարութիւնս կը կայանայ միայն յիշուած մէջ այն բոլոր զգացումները, ու խաւարչային խորհուրդ մէջ բանաւորութեանը . . .

Մինչև ցարդ եթէ չեմ գտնուած իմ չորս ամիսներէ աւելի միթիթարական անանդի վիճակիս վրայ, պատճառը այն է որ՝ նոխարանութեան վրայ շատ զօրուոր հաւատք ունիմ, և կը յուսամ որ եւ վերջապէս պիտի այցիլէ, արթնցնէ ու յուսաւորէ բոլոր այն ո՛ր և է կերպով և միջոցաւ մոլորած մտքերը որոնք գործուած քառանկի չարութիւն անդիտակ թիրեւս, անոր վրայ նոյն իսկ նոր ուժեր բարկուել արամագրութիւններ ալ ցոյց կուտան իրենց գործելակերպերով . . .

Իմ վերոյիշեալ հաւատքս ամեն ատենի համար ալ ամենափոքր փոփոխութիւն մը չիբեր թէեւ, սակայն ո՛չ ապաքէն Նախարանութիւնը իր արդարութիւնը ցոյց պիտի տայ իրեն հաւատարիմ, անկեղծ ու խղճամիտ պաշտօնեաներուն միջոցաւ . . .

Արդէն Ձեզ կը պարտիմ շնորհակալութիւն մը, յիշելով այն հոգածութիւնը՝ զոր ինքնարեւարար ցոյց տուիք սակ երկու ամսով չափ առաջ, Արթ. Տէր Ծաղոյեան քահանայի միթիթարութիւն ինձ այցելութեան զրկելով և անոր միջոցաւ յայտարարելով միանգամայն թէ՛ Առաջնորդարանը իմ վիճակովս պիտի հետաքրքրուի . . .

Նորին Արթանուպատուութիւնէ, իմէջ այլոց, անդեկացոյ նաեւ որ՝ բնական տուեալս գոյքերը ՀԱԿԶ եղած են և վաճառուելու սպասարկութիւններ կը գտնուին, իրր վարձագին ունեցած և ունենալիք պարտուցս համար . . .

Ահեղ վճիռ ստուգիւ . . . Գտան և հինգ տարիներէ հետէ գրեթէ անընդհատ ու իր հասկացածին չափ ազգին ծառայող մէկու մը համար . . .

գայ և գրան կղպակը փախսել տայ առանց ու եւ յայտնի պատճառի ու ապօրինի պայմաններու մէջ, և առանց որչա պաշտօն մը ունենալու գէթ ազգ . . .

Նա՛ գոյքերու «հակ» ըլլալը և Պարոն Յովակիմեանի այդ ատորինակ և արտակարգ վարմունքը կարելի կը նկատուի, քանի որ գործերս խաղաղութեանը չնործիւ կարգ մը անազնիւ և անբարեխիղճ մարդոց դաւադրութեանց, և պարտքերս պիտի ունենային, ու ցաւալի է՝ երբ յայտարարեմ թէ՛ միթչեւ ցարդ որոշապէս չեմ գիտեր որ տունի այդ խնդիրները ո՛ր կանգ առած են և ի՞նչ կարգադրութեան յանձնած, և թէ՛ վերջնական որդիները - եթէ կայ - ի միտս իմ գործերուն միայն տնօրինուած է, թէ՛ գոնէ արգարութիւնը և ուղղութիւնը ձեռքէ ի բաց չէ՛ թողուած անոնց կարգադրութեանն առթիւ . . .

Եթէ պատճառներ կային արդէն որ իմ ներկայ քառամսեայ զգոնելի կացութիւնս որ օրի աւելի դառնացնելով անտանելի կը դարձնէին յոգնատանջ մասնագործութեանս մէջ թաղելով զիս, անոնցմէ մին ալ՝ մէկ երկու ուրիշ կարեւորներու հետ, այդ գոյքերու գրաւման խնդիրն էր, որովհետեւ պէտք է ըսեմ թէ՛ ուրիշ շատերէ գնահատուելի նուազ հաւանական կարգ մը խիստ արժէքաւոր ձեռագիրներ են, ունէի և կրնային կորստեան մատուելի ի բացալայտութեան իմ խառնշուղեւելով և անխորհուրդ վիճակներ պատճառելով ինձ . . .

Գտնուած հիւանդանոցիս վարչութիւնը և բժշկական մարմինը, հոս բերուած առաջին օրերէս ց'այսօր իմ ընթացքէս և առողջական կացութեանս բնաւ զգոնելու պատճառ մը չունենալով, և մասնաւոր՝ նկատուելով թերեւ որ չարամտութիւններու զոհ մը եղած կրնամ ըլլալ, քանիցս ուղեցին արձակել զիս, սակայն որովհետեւ ըստ իրենց վարած հաստատութեան օրէնքներուն, պէտք էր վստահելի տեղ մը յանձնէին իրենց զրկած անձը, ուստի ինձ համար այդ «վստահելի» տեղը պակասելու պատճառաւ մինչև ցարդ յապաղեցաւ իմ աղատութիւնս ինձ շնորհուելու . . .

Այս պարագային կը մնար միայն առաջնորդարանը, որ ձեռնհասութիւն ունէր կ'ամ իր կողմէ պաշտօնեայ մը զրկել, կամ քանի մը առողջութիւնը Տրնօրինութեան՝ պահանջէր զիս . . .

Իսկ գալով առաջնորդարանին, կս'մ այդ օրէնքներուն անձանօթ էր և կամ և՛ իմ ազնուական պատճառաւ հէրաւ զայդ . . .

Արդ՝ Սրբազան նահապահ հայր, իմ կացութիւնս համառօտիւ ու սեղմօրէն պարզելով ներկայ քանի մը առողջութեան մէջ, իմ այս տեղէն մեկնումս, կամ աւելի ճիշտ կ'ըլլայ ըսել, ազատումս իւրաքանչիւր համար զարժանն անօրինելի Ձեր Գերապատուութեան որդեկրութիւնը կը թողում, յուսալով որ նպատակաւ կարգադրութիւն մը ընելու շնորհը չ'պիտի զլանաք, որով թէ՛ իմ առ նախախնամութիւնս տաճած յայտերս չ'պիտի վրիպին Ձեր շնորհի, և թէ՛ երախտագէտ էակ մը պիտի գտնուի Ձեր ճշմարտութեան թիւնը, ազգասիրութիւնն ու ժողովրդասիրութիւնը, իր օրտին խոր արձանագրած անջնջելի . . .

Մասնաւոր ի համար Ս. աջոյն Ձերում մեծ ամենախորին յարգանք

Ե. ԹՈՐՈՍԵԱՆ

Մանօթ. - Սոյն նամակէն միեւնոյն օրերը Պատկ. Երեւոյ Ժողովոյ անդամներէն ոմանց ալ զրկուած է . . .

ՉԵՓԻՒՆ ՀԱՅՐԵՆԵԱՅ

Ո՛վ դու, հեգասուր գեփիւն Հայրենեաց,
Ինձ աւեսարն կը գաս քեզարաց .
Ասա՛, քերէ՛լ ես յարե՛ր ցանկալի,

Հոս՝ Եգիպտական պայծառ երկնից սակ .
Ուր՝ փողփողոլ եկ միջս սուսդեր հաւակ
Ուր սիրունույն Նիլ ձօնէ հաւերսներ,

Լոյսի ու մեջիկ այս սար աշխարհում,
Քեզ կարօս քաջում սիրս կրում մաշում
Չովսցում հոգիս, սիրուն գեփիւնիկ
Ուր այս յարե՛րդ՝ հայրենեացս քաղցրիկ:

Կարօս քաջում եւ քշուտ հայրենեաց,
Կարկաչուններին ջիւց աղբորակաց,
Հասպա որչափ եւ երս շեռներին,
Լանջերում քուսած ծաղկանց բոյրերին:

Չե՛մ կարող մոռնալ նաեւ նրա օղ՝
Մարգեր, մարմանդներ դարբալ խնկախոտ
Գիտե՛մ չես քերէ՛լ, այս բոյր բաներ,
Չի այլ կերպ շոյքս այսօր դիմս՝ այժմ:

— Բերէ՛լ եմ քեզի արե՛րի շաշուն,
Հուր, հրդեհ, գոռում գեղալի գոշուն
Եղբարցդ հոնդիւն, արօսուր լաց ու կոծ
Եւ քուստ արե՛ան շիբ, գոյորջիբ հոծ:

ԳԻՍԱՒՈՐ
(Գ. Յ)

Ա.Գ.Ա.ՅԻՆ

Ե Ա Յ Ց Ե

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Տիար Ստեփան Մէրկուրեան
100 զրշ. ողջ նուիրած է քաղաքիս
Աղքատախնամ ընկերութեան, իր
ննջեցեալներուն հողահանգստեան ի
յիշատակ:

Ներկայ յայտարարութիւնը հը.
րատարակելու առիթէն կ'օգտուինք
Աղքատախնամ ընկերութեան Պատ.
Գործադիր Ժողովէ՛ր խնդրելու, որ
իր մտից և ելից, ինչպէս նաև ըն.
թացիկ գործառնութեանց վրայ հա.
մառօտ ծանօթագիր մը զրկել հաճի
« Արշալոյս » ի խմբագրութեան:

Այս տեղեկութիւնները խնդրե.
լու պէտքը ունեցած ենք, Աղքա.
տախնամի գործառնութեանց դէմ
մէկ քանիներու կողմէ զրկուած
գանդատագրերու հրապարակու պա.
տասխանելու համար:

ԱԶԱՐԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

« Բիւզանդիոնի » մէջ կը կարգանք
հետեւեալը:

Վսեմ. Աբրահամ քաջա Բարթոլ
որ Տէր Յարութիւն Ս. Պատրիարքին
կողմէ լիազօր փոխանորդ նշանակ.
ուած էր, հանդուցեալ Վահրամ
վրդ. Ապարանի թողած գրամին և
գոյքերուն մէջէն ձեռք բերել յա.
ջողած է մուրհակ մը, որուն հա.
մեմատ Տ. Վահրամ վրդ. իր Եգիպ.
տոսի մէջ ունեցած մէկ կալուածն
2000 սոկիի փոխարէն իբր աւանդ
իր քրոջն անուան փոխանցած է:

Այդ 2000 սոկիի պահանջը կը
վերաբերի երուսաղէմի Վանքին,
որ Թերման ուլ միակ և բացարձակ
տէրն է իր միաբաններուն բոլոր
գոյքերուն և դրամներուն:

Եթէ ժառանգորդք այս պարտ.
քին դէմ առարկութիւն հանեն,
դատարանի դիմում պիտի ըլլայ և
Բարթոլ քաջա իրաւագէտներու կար.
ծիքին դիմելով համազում է թէ՛
Եգիպտական դատարանները կատա.
րելագէտ կը ճանչնան Վանքին այս
իրաւունքն և տրուած Թերման ին
զօրութիւնը: Հետեւաբար Վանքը
դարձեալ Տէր կը դառնայ իր դրո.
մին որ արդէն իր անունովն և իրմէ
չահուած էր. կը հաւատեն թէ նոյն
կալուածն մինչև 3500 սոկիի արժէք
ունի: Բարթոլ քաջա ինքիբը տե.
ղեկագրած է Տ. Յարութիւն Ս. Պատ.
րիարքին, որ իր յատուկ շնորհա.
կալութիւնն յայտնած է գրով:

ԿՈՐՍՈՒԱԾ ՊԱՇՏՈՆԱԹՎՈՒՄ

« Իրաւունք » կը գրէ թէ՛ Պոլ.
սոյ պատրիարքարանի արձանագրու.
թեան Դիւանէն կորսուած են կարգ.
մը պաշտօնակցութեւ, որոնք կը վե.
րաբերին երուսաղէմայ կալուած.
ներուն 12 տարուան հաշիւներուն:
Այս կորուստին պատասխանա.
տու կը նկատուի Դիւանապետը,
Մկրտիչ Եֆէնտի Մեղիքեան:

ՉԵՐԲԱԿԱՆՈՒՄ

Ողբացեալ Պ. Արիիար Արիիար.
եանի ոճրագործութեան մասին բաց.
ուած քննութիւնները մեծ փութով
յառաջ կը տարուին: Եգիպտական
կառավարութիւնը՝ որուն համար ա.
կէ առաջ միամիտ հաւատացողներ
եղած էին թէ՛ նուազ կարևորու.
թիւն պիտի ընծայէր « Հայերի » ո.
ճիւններու, հիմայ լայն տեղ մը կուտայ
իր հետադարձութիւններուն, և հա.
ւանական է որ վերջ ի վերջոյ պի.
տի յաջողի իրեն պէտք եղած ծա.
նօթութիւնները քաղել: Ըստ այժմ
վարուելու համար:

Սնցիալ Հինչաթի առաւօտ,
5 Մարտ, ոստիկանութիւնը քննա.
կան այցելութիւն մը տուած է Տ.
Չարէհ Գալեանի տունը և վաճառա.
տեղին ի Եարա Գլաա Պէյ, և կարգ.
մը թուղթեր և այլն միասին ունե.
նալով կառավարչատուն փոխադրած
է զայն:

Ըսողներ կան որ՝ եթէ Տ. Գոչ.
եան օտարահպատակ ըլլար, բաւա.
կան պաշտպանութիւն պիտի վայե.
լէր գոնէ անմիջապէս չի բանտարկ.
ուելու համար, բայց օրովհետև Ա.
մերիկեան Հիւպատոսը անոր հպա.
տակութիւնը ի պաշտօնէ ժխտած է,
ուստի ըստ օրինի հակառակեան տակ
առնուած է ց'նոր անօրինութիւն:

Նոյն օրը միևնոյն ժաման, նը.
մանօրինակ այցելութիւն մը տեղի
ունեցած է ոստիկանութեան կողմէ
ի Եարա նուպար՝ Տիար Ատոմ Առ.
լանեանի բնակարանն, որոյ մեղ.
սակցութեան մասին ևս կառավա.
րութիւնը կատկածներ ունեցած է:

Որիչ մէկ քանի հայեր ալ՝ որ
անմիջապէս յարաբերութեան մէջ
կը գտնուին եղբր իրենց հետ, Ե.
գիպտոսի ասպնջականութենէն դժ.
գոն մնալով, առանց սովորական
« մնաք բարովի » իրենց տեղերը վե.
րագարցած են կ'ըսուի:

Այս կարգի անհետացումներ սա.
կայն, ձեռքակալութեան յան.
ցանքը կը ծանրացնեն, ինչ որ ցա.

ւալի պարագայ մ'է՛ և ծանր հե.
տեանքներ կրնան ունենալ: Իսկ
ամենէն շատ ցաւալին ու անդար.
մանելին մանաւանդ այն է որ Ե.
գիպտական կառավարութիւնը հայե.
րու հետ այս կերպ վարուելու պէտ.
քը կունենայ և թերևս ասկէ վեր.
ջըն ալ ունենայ մեր տարօրինակ (?)
նայրենասիրութեան շնորհիւ:

Ստացուած վերջին տեղեկու.
թեանց համաձայն, ոճրագործը խոս.
տովանած է իր Չարէհ Գոչեանէն
թեկադրուած ըլլալը, որը հիմայ
աւելի խիստ հակառակեան ներքե
կը գտնուի և յարաբերութենէ զըր.
կուած է:

Պ. Ասլանեան երաշխաւորու.
թեամբ աղատ ձգուած է կրօն:

ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒՄ

Այրի Տիկին Թագուհի Ս. Սէ.
մէրճեան և Տիարք Պետրոս և Յու.
սէփ Ս. Սէմէրճեան և փոքրիկ եղ.
բայրները, « Արշալոյս » ի միջոցա.
կրենց անհուն շնորհակալութեւ կը
յայտնեն Գեր. Առաջնորդ հօր. Պատ.
Քաղաք. Ժողովոյ յարգելի անդա.
մաց. Եկեղեցական Հարց և դպրաց՝
ինչպէս նաև Պատ. Հոգաբարձու.
թեան Ս. Աստուածածին Եկեղեցւոյ,
որ բարեհաճեցան անցեալ ուրբաթ
օր Հոգեհանգստեան պատարագ և
պաշտօն մատուցանել հանդուցեալ

ՍՏԵՓԱՆ ՍԷՄԷՐՃԵԱՆԻ

իրենց ամուսնոյն և հօր մահուան
քառասունքին առթիւ:

Շնորհակալութիւն կը յայտնեն
նաև ամեն աղգականաց և բարե.
կամաց որոնք Հանդուցելոյն յու.
զարկաւորութեան առթիւ անձամբ,
նամակաւ և հեռագրաւ իրենց ցա.
ւակցութիւնները յայտնել բարեհա.
ճած էին:

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐ

ՈՒՆԿՆԻՐՈՒԹԻՒՆ
Բ. Խտիլը նախորդ օրը Ապտի.
նի պալատին մէջ ունկնդրութիւն
տուաւ բարձրաստիճան և պաշտօ.
նական անձերու, որոց թուոյն մէջ
կը գտնուէր նաև Անդլ. կառավա.
րութեան ներկայացուցիչը, Սըր Էլ.
արն Կորսթ:

ԱԶԳԱՅՆԱԿԱՆՆԵՐԸ

Եգիպտոսի աղբայնականները
Բ. Խտիլին ուղղեալ բազմատորագիր
խնդրագիր մը կը պատրաստեն, Ե.
գիպտոսը սահմանադրական կառա.
վարութեամբ մը օժտել խնդրելու
համար:

Յիշեալ խնդրագրոյն պարու.
նակութիւնը, որ իր շահեկան կող.
մերը ունի, առաջիկայ թուով թարգ.
մանաբար պիտի ներկայացնենք մեր
ընթերցողներուն:

ԿՆՈՋ ՄԱՏ ԿԱՅ

Նախորդ օրը Էօզպէքիյէի գա.
րեջրատուններէն միոյն մէջ բաւա.
կան ծանր կուլ մը տեղի կունենայ
ուր ակտոնները և գաւազանները կա.
րեւոր դերձր կը կատարեն գլուխ.
ներու և դէմքերու վրայ:

Գարեջրատան նուազածուհի.
ները թէև ետեի դռնէն կը փախ.
չին առ ահի, բայց կերեի թէ « մա.
տերնին » միասին առնելու կը մոռ.
նան:

Մաժօր Բարթիլէ մինչև որ քսա.
նի չափ ոստիկաններով կուտոյն վայրը
կը հասնի, ամէն ինչ խաղաղ վիճակի
մէջ կը դառնէ:

— Նախէ Գարաի անունը երիտա.
սարգ. մը սախս քրիստիանի միջոցաւ
անձնասպանութիւն կը փորձէ և չի
յաջողիր:

Այս յուսահատական արարքին
պատճառն է եղբր սիրիացի գեղուհի
մը՝ որուն ձեռքը կը խնդրէ, բայց
ճնողքը կը մերժեն 85 սոկի չունե.
նալուն համար: Հետեւաբար ձեռքին
տեղ « մատիկը », կը մնայ գործին մէջ:

— Երկու տեղացիներ վաճառատունէ
մը 31 սոկի գողնալով՝ հաճելի ժա.
մանց մը ընել կորուչն, բայց ոստի.
կանութիւնը կը խանդարէ իրենց ոս.
կեղինիկ ծրագիրը՝ Վասա ըսուած
թաղին մէջ ձերբակալելով զիրենք:
Վրանին խուզարկուելով երկու
սոկի միայն կը գտնուի: Յայտնի բան
է որ « կիտլ մատ », մտած էր խեղճե.
րուն գրպանները:

ԱՐՇԱԼՈՅՍ ձեռքէ կը ծախուի
Տիար Գրիգոր Տամկաճեանի քով
Պէն Էլ Սուրէն, հատը 20 փարայ
ողջի:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Պիարից 8 Մարտ - Էսոնար քա.
ղաւորը հոս հասաւ:

Լոնսրա 8 Մարտ - Մրիկը շաճ
նարսեկումներ պատճառեց Կալի եւ
Իրլանտայի եղբրներուն վրայ:

Պերլին 8 Մարտ - Կր ծանուցա.
նել քե՛ Կայսրը Բաշերուօի մէջ Ի.
սալիոյ քաղաւորին հետ պիսի ճե.
սակցի:

Սալօնիկ 8 Մարտ - Յունական
Հիւպատոսաւանի ստալիս քարգիւն
Պ. Ասիլի մեռաւ: Բոյոր հիւպա.
տաները համազգեստով յուղարկա.
ւորութեանը ներկայ պիսի գեներալ
այսօր - Կր կարծուի քե՛ պատկեր.
ները պոչկարներ են:

ԱՆՈՒՇ ԿԵՐԷՔ ՈՐ ԱՆ ԻՇ ԸԼԼԱՔ

Պուլկարական շաւ պատրաս.
տուած սուճուգ, վարդի, բալի
(ֆիշէ) և ծիրանի անուշներ կը վա.
ճառուին շափաւոր գներով:

Դիմել ճաշարան Թուրքիոյ
Ապտին Եարա Քուպրի, Չաքար Ղա.
ղարեանին:

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻՍԱԽՈՏԻ ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻՎԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՂՂՈՅ ԷՕՁՊԷԲԻՅԷ



ՄԵՓԱԿԱՆԱՏԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԻՔ

ՅԱՏՅԱՆԻՇԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է .

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի աժան գնեցողու կամ վայելելու համար , ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՛ պէտք է նախընտրել մեր վաճառատունը :

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար՝ հարկ չ'կայ հոս ու հոն ժամաւաճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատեղին :

Պարսկական անհնարնոր թէմպէրի ալ և ալ տեսակները բայց մեր վաճառատունէն , ուրիշ տեղերէ զնելը պարզապէս սխալի է :

Մեր վաճառատունը վերջապէս , զինքնու աժանութեամբ , տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և ալ ամէն տեսակէտերով , և մանաւանդ գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է , որուն անժխտելի ապացոյցներէն մին ալ զարգացած եւրոպացիներէ օրըստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են :

Ն . ԵՒ Ա . ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԻՔ

ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ . ՆԱՅՏԼԻՆԿԷՐ

Պալատի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն , Պրիսթօլ Օթէլի ճիշտ գիմաց Գաթէ Տը Լա Պուրսի կից

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ՔԱՂԱՎՆԵՐՈՒՆ ՄԷՉ ՄԱՍՆԱԾԻՒՂԵՐ ՈՒՆԷՐ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Մինկէրնիսն են եւ ասոնցմէ մինչեւ ցարգ 17,000,000 ծախուած է :

400 է աւելի վիսյակն եւ մեխայնեղով վարձատրուած , Եւրոպայի ամենալաւ մեքենաներ .

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Ա.Ռ.Ա.Ջ.ԻՆ ՄՐՅԱՆԱԿ


Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսին մէջ ստացած է .

ՀԱՌԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ

ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԵՏԻՎԱԿԱՆ ՏՆԱ

Կեղծերէն զգուշանալ , ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ Մինկէրնի յանձնարարին



ԳԻՆ ՉԱՓԱՌՈՐ

Չրի դասեր և նորոգութիւններ , Մինկէրնի մեքենայից համար , յաճախողաց տուններուն մէջ :

Վճարմանց գիւրութիւն

Փոխանակութիւն հիներու եւ նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ՀՆՉԱԿ
Կեդրոնական Օրիակ Հեցակեան Կուսակցութեան ԲԱՆԵՒԹԷԿԵՐՈՐԻ ՏԱՐԻ Հասցէ՝ M . Bellart 24 Avenue du parc de Montsouris Paris France

ԱՐՄԷՆԵՒԱ
Լրագիր Ազգային , Բարոյական եւայն . ԻՔ րդ . ՏԱՐԻ Հասցէ՝ M . Portoukalian Directeur du journal « ARMENIA » Maaseille France

ՌԱԶՄԻԿ
Լրագիր Ազգային , Գրական եւ Բարոյական . ԵՐՐՈՐԻ ՏԱՐԻ Հասցէ՝ Rédaction du journal arménien « RAZMIG » Pitippople Bulgarie

ԻՐԱՒՈՒՆԷՔ
ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԺԳՐԳ . ՏԱՐԻ Հասցէ՝ Rédaction du journal « IRAVOUNK » Boulgari VARNA

Ա.Ջ.Գ.
Շարքարքեր Ազգային Գրական եւ Բարոյական Առաջին Տարի Հասցէ՝ The « AZK » Pub . Co . 175 Tremont St. Boston ; Mass .

ՄԱՍՈՒ ԳԻՐՔԵՐ
ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ՄԱՏԵՆԱԳՐԱՆԸ

Թիւ 1 Թրքուհին 50 սանթիմ
« 2 Հիւլէն 50 »
Ժողովուրդին Մատենադարանի գրքոյիներուն հեղինակն է Տ . Ա . Պալեան , եղիպտոսաց քաջ ծանօթ իր հրատարակութիւններով եւ յօդուածներով : Թրքուհին , պատկեր մ'է Ուրֆայի կոտորածին , եւ Հիւլէն եղիպտոսացի հայութեան առջին օրերուն մի մանրանկարը յեղափոխական գործունէութեանց վրայ խորհրդածութիւններով : Գիմել « Արշալոյս » խմբագրութեան կամ ուղղակի հեղինակին , հետեւեալ հասցէով :

A . BALIAN (Egypte) Le Gaire

Մ Ի Չ Ի Ա Ն Ս Ս Պ Վ Ա Ն Ա Ն

Spécialiste pour les cheveux ՇՍՐԱ ԱՊՏ ԷԼ ԱԶԻԶ ԹԻԻ 5 .



Մինչեւ հիմայ եղած փորձերով հաստատուած է որ Փախագ Օրիի կամ Պիր Օրիի եւ ասոնցմէ մասնաւորապէս պատրաստուած հեղուկներուն գործածութիւնը սքանչելի արդիւնք առած է՝ թէ՛ մաշկը չի թափելու եւ թէ՛ երկնայնիլու համար : Միայն գարձանն է այս պատրաստութիւնը՝ անիծները , ոչ ինչն ու մազերու արմատներուն վրայ լոյս գրած միջբոսանիք սպաննելու : Մինչեւ ցարգ ինչ գիմոյներն վերջին ծայր գոն մնացած ըլլալով՝ յուսով եմ որ յետ այսու ալ գտնուի ըլլալու պատճառ մը չ'պիտի ունենան : Անխորհրդախ ու մեծ խնամով պատրաստուած Պուսայ ամենաբարձր մազի ներկերուն ամէն գոյններէն ալ կարելի է գտնել իմ վաճառատունս : Գիմեցէք , փորձեցէք եւ զո՞ն պիտի մնաք : Մ . ՍՍՊՎԱՆԱՆ

ՄԵԾ ՍՐՃԱՐԱՆ ԷՍԵԿԱԿԱՆ

GRAND CAFE ARMENIEN (Le Caire)

Սալն Մանարանք որ Միսան էլ Խաղնէտարի օդատուն հրապարակին վրայ կը գտնուի , իր մաքրութեամբ եւ ընդարձակութեամբ տեսակին մէջ յարմարագոյններէն մին է հանգստեան ժամանակ անցնելու : Մանարանք յաճախողներ վերոյիշեալ առաւելութիւններէն զոս հոն պիտի գտնեն նաեւ շաւարոյն ընկերակներ , նոր եւ ընտիր պիւրառուներ եւ անբերի ապաստարանք :

ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՄԻՍԱԿ ՍԱՐԴԻՅԵԱՆ

Տ Պ Ա Ր Ա Ն

ԱՐՇԱԼՈՅՍ ԼՐԱԳՐԻ ՀԻՄՆՈՒԱԾ 1900 ԻՆ

ՀԱՍՏԱՏՈՒԱԾ Է Ի ԵՂՐԱ ԿՊՏ-ԷԼ-ԱԶԻԶ ԵԼԻՑ ԲԱՇԱՅԻ ՊԱՐՏԻՉԻՆ ԴԷԳ

Վճուռնի տպագրական ամէն տեսակ յանձնարարութիւններ , նամակագրութիւն , ազդարարութիւններ , այցեքարտեր , մահաղաներ , գիրքերու և պրոչիւրներու տպագրութիւններ և այլն : Յանձնարարութեանց համար սակարկուած գնոյն կէտը կանխիկ է , իսկ մնայեալ կէտը յետ տպագրութեան՝ յանձնման պահուն վճարելի : Յանձնարարութիւնք ամենայն ճշգրտագնութեամբ պիտի կատարուին : ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՏՊԱՐԱՆԻ